ԱՆԵԾՔ – ՀԱՅՐԵՆՆԵՐ

Հայրենների երգաշխարհը հարուստ է հայրենի ժանրային տարատեսակներով, որոնցից մեկն էլ անեծք-հայրենն է, որն առաջին անգամ արժանանում է ուշադրության և դիտվում է որպես հայրենի ժանրային տարատեսակ, ինչպես խրատ-հայրենը, սիրերգ-հայրենը, գանգատ-հայրենը և այլն: Միաժամանակ հարկ է նշել, որ անեծքները բազմաթիվ անգամներ հանդես են գալիս տարբեր հայրեններում, սակայն անհրաժեշտ է տարբերակել անեծք-հայրենները և այլ ժանրային տարատեսակների մեջ գործածված անեծքները, որոնց քննությունը կատարված է առանձին: Այստեղ պարզապես ուզում ենք շեշտել, որ դրանք անեծք-հայրեն չենք կարող համարել, քանի որ, ասենք, սիրերգ-հայրենի մեջ հանդես եկած անեծքներ են: Ըստ էության անեծք-հայրեններն էլ անեծքների շարք են իրենցից ներկայացնում, սակայն դրանք բազմաբաղադրիչ կառուցվածքային տիպի անեծքներ են, այլ կերպ ասած ամբողջ հայրենը անեծքների ամբողջական շարան է: Քննենք անեծք-հայրենների մի քանի օրինակներ, որպեսզի գործնականում հիմնավորենք մեր ասելիքը: Անեծքների քննությունը կատարելիս նկատել ենք, որ կան սիրած աղջկա ծնողներին՝ հատկապես մորն ուղղված անեծքներ, որոնք ունեն մարմնական պատժի ցանկություն, որպիսիք հանդիպում են նաև անեծք-հայրեններում:

Անիծած են հայրն ու մայրն
'Ի այն երէցն, որ զքեզ պսակեց.
Կտրեց զնօնօֆար ծաղիկն
'Ի կոնի փուշըն պատրուսեց.
Ով զքեզ յիսնէ բաժնեց՝
Քօսոտի 'ւ ի ոսկերքըն՝ ցեց.
Հոգին անանց հուրն այրի,
Զոր Տէրըն դիւաց պատրաստեց (Ա/ժ, 9-16):

Բերված անեծք-հայրենը միաժամանակ հասցեագրվում է երեք անձի, որոնք անիծվում են մեկ պատճառով, այն է՝ բաժանել են սիրող զույգին և աղջկա հայրն ու մայրը իրենց աղջկան պսակել են ուրիշի հետ: Ծնողների հետ հավասար անիծվում է նաև այն երեցը, որ ուրիշի հետ պսակել է իր սիրածին: Բաժանման պատճառ դարձած անձինք արժանանում են ոչ միայն մարմնական պատժի (Քօսոտի 'ւ ի ոսկերքըն՝ ցեց), այլև հոգեկան պատժի (Հոգին անանց հուրն այրի) ցանկության: Անեծքի դրդապատճառը ակնհայտ է (Ով զքեզ յիսնէ բաժնեց), ուստի իրենց կատարած արարքին համապատասխան էլ բաժանողները (այդ թվում նաև իր գործը կատարող՝ պսակող երեցը) արժանանում են չարամաղթության: Անիծողի դիրքերից սա միանգամայն բնական է, քանի որ իրեն հոգեկան ցավ են պատճառել: «Անեծքները լինելով աֆեկտիվ հոգեկան գրգիռների բանավոր արտահայտություններ, արդյունք են առարկայական

որոշակի դրդապատճառների: Միշտ էլ անիծվողի կոնկրետ արարմունքը, խոսքը կամ վարքագիծն է անիծողի մոտ առաջ բերում անեծքով չարաբանելու ցանկություն: Նորմալ հոգեվիճակում գտնվող մարդը երբեք, առանց որոշակի պատճառի, չի անիծում» (Ս. Հարությունյան, անեծքի և օրհնանաքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Ե., 1975, էջ 125-126): Եթե վերևում բերված անեծք-հայրենում կա որոշակի արարք-դրդապատճառ, որի համար և անիծվում է, ապա ստորև բերում ենք մի անեծք-հայրեն, որտեղ անեծքի դրդապատճառը ոչ թե արարք է, այլ խոսք-խոստում, որը չի կատարվում, և խոստումը չկատարելն էլ դառնում է անեծքի դրդապատճառը:

Երկու՝ թուխ ու մէկ բարակ,
Կու կենան ի մէկ բըրըշակ.
Թուխն այլ ի բարակն ասաց.
«Ի ծոցէս անեմ քի ճարակ».
Ասաց ու չարաւ ճարակ,
Թող ընկնի ի ծովն անատակ.
Չընկունքն ի մէջն ուտեն,
Ու քաշեն ի վտկէ-վտակ (Ա/Կ, 443-446, Ա/ԿԲ, 84-86):

Սիրո խոստում է տրված, ավելի որոշակի՝ ծոցը վայելել թույլ տալու խոստում. որը չի կատարում աղջիկը, իսկ տղան անիծում է, որ ծովամույն լինի խոստումը դրժողը, դեռ դա քիչ է, ավելացնում է նաև, որ ձկները խեղդված մարմնի մսից ուտեն ու քաշեն վտակից վտակ: Առաջին անեծքը մարմնական պատժի ցանկություն է արտահայտում՝ մահվան արժանացնելու, իսկ երկրորդը՝ բարոյա-մարմնական պատժի՝ դիակը «անթաղ մնալու», այլ կերպ ասած՝ անգերեզման մնալու չարամաղթությամբ: Եզակի հանդիպող անեծք է, որը գեղարվեստական մտածողության արդյունք է: Անեծքն այս դեպքում ուղղված է աղջկան, իսկ անիծողը սիրուց տոչորվող տղամարդն է:

Անեծքների մեծ մասը հասցեագրված է սիրած աղջկան, իսկ անիծողը սեր պահանջող տղան է, որը մտավախություն ունի, թե սիրած աղջիկը իրեն կարող է մոռանալ: Ուստի անեծքը ստանում է պայմանական բնույթ, եթե մոռանա իրեն, ապա կանիծվի իր կողմից: Բնականաբար, պիտի ընդունենք, որ պայմանը կատարելու դեպքում անեծքը չի գործելու, քանի որ սիրող տղան սեր է պահանջում, որը նրա մեծագույն ցանկությունն է, այդ ցանկությունը չկատարվելու դեպքում է, որ նա չարանում է ու անիծում:

Հայ իմ մազտ ուռի մուրճիկ,
Չորանա՛ս, թէ զիս մոռանաս.
Փուտ ու ճիճվի կեր դառնաս,
Թէ ծոցիկտ այլ մարդու բանաս.
Ահա քեզ գիշեր կու գայ,
Երազին դու գէշ տեսանես.
Ամէն առաւօտք լուսին
Չինք թողուս 'ւ ի յիս դառնաս (Ա/ԽԴ, 229-236):

Անեծքներից երկուսն այստեղ ունեն մարմնական պատժի ցանկություն, իսկ մի անեծքն էլ ունի բարոյա-մարմնական պատժի ցանկություն: Այդ անեծքն իր տեսակի մեջ յուրահատուկ է, և այդ տեսակն առհասարակ չի դիտված ժանրի ուսումնասիրման ընթացքում: Երազում տգեղ տղա տեսնելու ցանկությունն է չարամադթվում սիրած աղջկան, որ երբ գիշերն անցնի, նա թողնի երազում տեսած տգեղ տղային ու վերադառնա իր մոտ: Մոռացվելու մտահոգությունը մեկ անգամ չէ, որ զբաղեցնում է սիրող տղային և դառնում անեծքի դրդապատճառ:

Իմ եար 'ւ իմ կանաչ խիար,
Թող չորնաս թէ գիս մոռանաս.
Չորնաս ճիճէկեր դառնաս,
Թէ զօոցիկտ մարդու բանաս.
Մեռնիս ու յանտէնն երթաս,
Անդ ճերմակ ծոցդ ի՞նչ տի ենես.
Ձայդ այլ որթըներն ուտեն,
Ձիս ատկից մահրում կու հանես (Ա/ԿԵ, 98-105):

Այս անեծք-հայրենում օգտագործված է յուրահատուկ գեղարվեստական պատկեր, որ մերօրյա պատկերացումներով նույնիսկ ծիծաղելի է թվում, սակայն ըստ էության պատկերը ծառայում է անեծքի տպավորությունն ընդգծելու նպատակին: Սիրած աղջիկն անվանվում է «կանաչ խիար» այն տրամաբանությամբ, որ իրեն մոռանալու դեպքում չորանալու և «ճիճէկեր» դառնալու չարամադթության արժանանա: Անեծքներն այստեղ մի դեպքում ունեն գեղարվեստական պատճառաբանվածություն՝ որպես վարունգ չորանալու, ճիճվակեր դառնալու, մյուս դեպքում առանց գեղարվեստական այլաբանության արտահայտում են մեռնելու, ճերմակ ծոցը այն աշխարհում որդերն ուտելու մարմնական պատժի ցանկություն:

Մի անեծք-հայրենի մեջ էլ անիծվողը կրկին սիրած աղջիկն է, որը չի խղճում սիրո տեր տղային, որն այստեղ անեծք-հայրենի հեղինակն է:

Ով որ սիրոյ տէր մանկան
Չողորմի՝ ինքն մեռանի.
Իր մահն ի մորին լինի
'Ի իր բերնին հաղորդ չի գտի.
Օձերն առ թաւութ կապեն,
Խատ գորտերն ի սարկաւագնի.
Ագռաւն ալ էրէց լինի,
Սև ճայեկն իւր հաբեղանի (Ա/ԽԸ,139-146):

Անեծքն այս հայրենում ստացել է մարմնական պատժի՝ մահվան դատապարտված տեսնելու ցանկություն: Սակայն մահից հետո էլ անիծվողը դատապարտված է կրոնա-բարոյական պատժի՝ անհաղորդ մեռնելու, որից հետո էլ օձերը պիտի դագաղ պատրաստեն, գորտերը սարկավագ լինեն, ագռավը երեց լինի, սև ճայը՝ աբեղա, որոնք պիտի կատարեն թաղման արարողությունը: Իր

տեսակի մեջ ևս այս անեծքը յուրահատուկ է, ունի գեղարվեստական պատկերավորություն ու բանաստեղծական երևակայության արդյունք է:

Ով որ սիրու տեր մարդոյն
Չողորմի՝ ինքըն մեռանի,
Իր մահն ի մորին լինի
Ի իր բերնին հաղորդ չը ինկնի.
Աղուեսն լալական լինի,
Գայլագռաւն՝ իր հաբեղանի.
Շունն այլ իւր մատաղ լինի,
Լուք ագին գէտ ըզմոմ վառի (Ա/Կ, 215-222, Ա/ՁԲ, 403-410, Ա/ՁԳ, 654-661):

Հայրենների տաղաշարքերում բազմաթիվ անգամ հանդես եկած այս անեծք-հայրենի առաջին քառյակը կրկնվում է նույնությամբ, ինչպես նախորդ անեծք-հայրենում է, իսկ վերջին քառյակում փոխվում են միայն կենդանիների անունները, սակայն անեծքն ըստ էության մնում է նույնը: Այստեղ մեռածի վրա պիտի սգա աղվեսը, գայլագռավը պիտի աբեղա լինի, շունը մատաղ լինի, իսկ շան պոչը մոմի տեղ պիտի վառվի նրա դիակի մոտ, ով չի խղճում իր սիրածին: Մարմնական և կրոնա-բարոյական պատժի ցանկությունն այստեղ ունի մի նպատակ, այն է՝ սիրող պատանու սերը պիտի գնահատվի սիրած աղջկա կողմից, հակառակ դեպքում նա կարժանանա անգութ անեծքի:

Մի անեծք-հայրենի մեջ էլ տարագիր դառնալու ցանկությամբ է արտահայտվել պատիժը:

Հետ հոգոյս ի վեր թռայ՝
Բռնելու և արգիլելու.
Զերդումն ի բերանդ առիր.
- Երթալու եմ, չեմ կենալու:
- Երթաս ի դարիպ աշխարհ,
Ի յօտար երկիր ի հեռու.
Լայ սրտիկդ ու զիս ուզէ,
Չկտրի աչերտ ի լալու (Ա/ԿԸ, 155-158):

Անեծքի այս տեսակը ևս չի դիտված ժանրի ուսումնասիրության մեջ որպես կոնկրետ խումբ, սակայն այն կարելի է համարել սոցիալ-քաղաքացիական պատժի ցանկությամբ անեծք, որի պատիժը պանդուխտ դարձած տեսնելու ցանկությունն է: Անշուշտ, տարագիր մարդը կարոտի ցավ է ապրում, որն էլ ծնում է հոգեկան տառապանքներ, ուստի և անեծքն ունի նաև շարունակություն՝ սիրտդ կարոտից տանջվի, չկտրի աչքերիդ լացը: Վերջինները հոգեկան պատժի ցանկություն են արտահայտում, սակայն խորապես կապված են տարագիր տեսնելու ցանկությամբ անեծքի հետ: Որ անեծքի այս տեսակը պետք է համարել սոցիալ-քաղաքացիական պատժի ցանկությամբ անեծքների առանձին խումբ, հաստատվում է հետևյալ անեծք-հայրենիներով, որոնց մեջ մայրը անիծում է որդուն, որ դարիպ-տարագիր դառնա:

Իմ մայրըս որ զիս եբեր,
Անիծեց, թէ՝ Դարիպանաս,

Երթաս ի յօտար երկիր,
Հայր ու մայր 'ւ եղբայր չունենաս.
Ուր որ քոյր 'ւ եղբայր տեսնուս՝
Դարձնես զերեսիկդ ու լաս.
Սև այնքան սնարք առնես,
Ի վերայ հողին քնանաս.
Գլխարկդ այլ ի վեր կալնուս,
Քան զԱստուած այլ ճար չունենաս (Ա/ԿԳ, 315-324):
Մարիկն անիծեց զորդին,
-Ի՛մ որդի, դուն դարիպանաս.
Երթաս ի յօտար երկիր,
Զղարիպին դատրն գիտենաս.
Զքարն սնարք առնես,
Ի վերայ աւազին քնանաս.
Վաղվէնէ քնէն ի վեր ելնես,
Քան զԱստուած այլ ճար չունենաս (Ա/ՁԲ, 1075-1082):

Նկատելի է նաև, որ այս երկու հայրենները միևնույն անեծք-հայրենի տարբերակներ են, որոնք ժողովրդի շուրթերին հնչել են փոփոխված, բայց ընդհանուր առմամբ նույն հարցադրումով: Այստեղ կարևոր է նաև, որ անիծողը մայրն է, իսկ անիծվողը՝ որդին: Դա, անշուշտ, փոքր-ինչ տարօրինակ է, սակայն հասկանալի է այնքանով, որ մայրը մարմնական պատժի ցանկությամբ անեծք չի չարամաղթում որդուն, այլ հորից ու մորից, քրոջից ու եղբորից կարոտ մնալու ցանկություն է արտահայտում նրա անեծքը:

Մեր ժողովուրդը դարեր շարունակ հավատացել և այժմ էլ հավատում է անեծքների՝ չար խոսքի զորավոր ուժին: Դեռևս Ե դարից է մեզ հայտնի Ներսես Մեծի անեծքը, որին հավատում է Ղազար Փարպեցին, (տես Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Ե., 1982, էջ 59-61) դարեր անց նաև՝ Ներսես Շնորհալին «Թուղթ ընդհանրական»-ում, իսկ ավանդությամբ վկայված է, որ Անի քաղաքը կործանվել է Հովհաննես Պլուզ Երզնկացու անեծքով (տես Ղանալանյան Ա., Ավանդապատում, Ե., 1969, էջ 158, ինչպես նաև Խաչատուր Աբովյան, Վերք Հայաստանի, Ե., 1981, էջ 275-276): Հայոց արքա Արտաշեսը անիծում է իր որդուն, Սասնա ծուռ Դավիթը՝ իր որդուն՝ Փոքր Մհերին: Ժողովրդի պատկերացումների մեջ արմատացած է անեծքի հմայական զորության գաղափարը: Պատահական չէ, որ հայրեններում շռայլորեն տարածված են անեծքները, իսկ հայրենների երգաշխարհում որպես առանձին ժանրային տարատեսակ հանդես է եկել նաև անեծք-հայրենը, որն առաջին անգամ է արժանանում ուշադրության և գիտակցվում իբրև ժանրային միավոր:

Այսպիսով, անեծք-հայրենների գոյությունը և հայրեններում անեծքների առատորեն հանդես գալը ևս հաստատում են, որ մենք գործ ունենք ժողովրդական մտածողությունից ծնված ստեղծագործությունների հետ, որոնք մեկ անգամ չէ, որ ի հայտ են բերում ժողովրդական տարերային ու անմիջականորեն բացահայտված ոգի: